Գրադարանի հավաքածուների համալրումը ցեղասպանությանը վերաբերվող գրականությամբ

Կարինե Զենջիջյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայությունն իր հազարամյա պատմության ընթացքում կուտակել է բազմաթիվ անկատար նպատակներ, իղձեր, որոնց իրականացման առաքելությունը փոխանցվում է սերնդե սերունդ: Չնայած այդ նպատակների առատությանը, այնուամենայնիվ, դրանցից առաջնային են դառնում միմիայն նրանք, որոնք առնչվում են հայության համահայկական գերագույն նպատակին, այն է Հայոց հողահավաքի ու ազգահավաքի ծրագիրը::

Երբ հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցը դիտարկում ենք այս տեսանկյունից, ապա միանգամից հասկանալի է դառնում սույն հարցի կարևորությունն ու առաջնահերթությունը, այս հարցի նկատմամբ հետևողականության անհրաժեշտությունը:

Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը այն նպատակներից է, որոնք հանգրվանային լուծումներ են պահանջում, ուստի՝ նման նպատակները ոչ միայն համարվում են ազգային, այլև՝ ամրագրվում են ազգային և պետական անվտանգության հայեցակարգերում, և դառնում են նաև հայկական պետության արտաքին հարցերի առաջնային խնդիր:

2015թ Հայոց ցեղասպանության 100 –ամյա տարելիցն է:Սակայն բոլորին է հայտնի՝ մարդկության դեմ ոճիրները վաղեմության ժամկետ չունեն: Մեծ Եղեռնի հարյուրամյակն ավարտի սահմանագիծ չէ, այլ յուրատեսակ հանգրվան: Հարյուրամյակով մենք ամփոփելու ենք պատմական մի ընթացք և ազդարարելու հանուն արդարության վերականգնման պայքարի մի նոր փուլ, որը համալրվելու է ժխտողականության քաղաքականությանը դիմակայելու նոր գործիքներով:

Թեև Թուրքիան ցայսօր մերժում է Հայոց ցեղասպանության փաստը,սակայն այն ճանաչել ու դատապարտել են բազմաթիվ երկրներ պետական տարբեր մակարդակներում և միջազգային կազմակերպություններ Հայ և այլազգի շատ մտավորականներ,գիտնականներ,գրողներ ու հրապարակախոսներ գրեթե մեկ դար իրենց գիտական աշխատություններում, չափածո և արձակ ստեղծագործություններում,մամուլի էջերում դատապարտել են ցեղասպանությունը և հանդես եկել պահանջատիրական իրավունքով:

Հայոց Մեծ եղեռնի վերաբերյալ լույս են տեսել փաստավավերագրական ժողովածուներ, հուշագրություններ, գիտական հետազոտություններ, պատմագրական և մատենագիտական աշխատություններ , Մեծ եղեռնի ճանաչման ու դատապարտման գործընթացը ներկայացնող ուսումնասիրություններ և այլ գրականություն: Հայտնի հեղինակներից են Մկրտիչ Ներսիսյանը,Ջոն Կիրակոսյանը,Ռուբեն Սահակյանը,Նիկոլայ Հովհաննիսյանը, Վարդգես Միքայելյանը, Վահագն Տատրյանը, Յուրի Բարսեղովը, Ավետիս Փափազյանը, Արտեմ Օհանջանյանը, Վերժինե Սվազլյանը, Ստեփան Ստեփանյանը, Ռուբեն Ադալյանը,Հարություն Գևորգյանը, ինչպես նաև ֆրանսիացի Իվ Տերնոնը,գերմանացիներ Վոլֆգանգ Գուստը, Ֆրանց Վերֆելը, Հիլմար

Կայզերը,հրեա Յաիր Աուրոնը/ ,,Անընդունելի անտարբերություն.Սիոնիզմը և Հայոց ցեղասպանությունը՝..՝նորզելանդացի գրող Լեն Ուիքսը/Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ,,Ծագումը:Բացահայտում՝.. վեպը/ և ուրիշներ:

Ուշագրավ փաստ է, որ Հայոց ցեղասպանության թեմայով գրքեր ու հոդվածներ են գրվում նաև թուրք և ադրբեջանցի գրողների ու մտավորականների կողմից. Օրհան Փամբուք ՝,,Ձյունը՞,Աքրամ Այլիսլի՝,,/Քարակերտ երազներ;/, Ռագըփ Զարաքոլու ,,Հայերը և թուրքերը.. / և այլք:

Այսօր աշխարհում ցեղասպանության թեմայով կազմակերպվում են տարբեր միջոցառումներ:

Ազգային գրադարանը որպես մշակութային, գիտական կարևորագույն օջախ 100- ամյա տարելիցին ընդառաջ առաջնային խնդիր է համարում Հայոց ցեղասպանությանը նվիրված հայկական և օտարերկրյա մամուլում տպագրվող գրականության ձեռքբերումը: Գրադարանի հավաքածուները համալրվում են ոչ միայն պարտադիր օրինակի և գնման միջոցով, այլև արտերկրում Հայաստանի դեսպանությունների և Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների, սփյուռքի կազմակերպությունների և բարերարների սրտացավ օժանդակությամբ : Զուգակցելով աշխատանքի ավանդական և նոր մեթոդները, գրադարանն իրագործում է հավաքածուների շարունակական համալրում՝ օգտագործելով նաև էլեկտրոնային ռեսուրսները: Համապատասխան գրականության մասին տեղեկատվություն գրադարանը ստանում է մամուլից, գրավաճառ ցանցերից,ինչպես նաև անհատների միջոցով: Հավաքածուների համալրումը կատարվում է հիմնականում<<amazon>> և <<ebay>> գրավաճառ ցանցերի, Ստամբուլի LIBRA հրատարակչության միջոցով:

Ազգային գրադարանում առկա և նոր լույս տեսնող հայագիտական թեմաներով գրականությունը ներկայացվում է ARMBOOKEXPO կայքէջում :

2015 թվականին Ազգային գրադարանը Մշակույթի նախարարության աջակցությամբ կազմակերպելու է հայկական գրքի ցուցադրություն: Ցուցադրվելու են Հայաստանում և արտերկրում հրատարակված գրքեր հետևյալ թեմաներով՝

1. Արտասահմանում հրատարակված հայկական թեմայով /1991- թվականից հետո լույս տեսած /

2. Հայաստանում հրատարակված հայկական թեմայով /2012- թվականից հետո լույս տեսած /

3.Թարգմանական/1991- թվականից հետո լույս տեսած /

4.Հայաստանը և հայկական մշակութային ժառանգությունը ներկայացնող /1991-թվականից հետո լույս տեսած /

5.Ցեղասպանություն./ բոլոր ժամանակներում հրատարակված/

Մինչ ցուցադրությունը նախատեսվում է կազմել և հրատարակել կատալոգ, որտեղ կներառվի յուրաքանչյուր գրքի կազմի լուսանկարն ու առկա հակիրճ մատենագիտական տեղեկությունը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության և միջազգային հանրության կողմից այն ճանաչելու և լուսաբանելու հարցերը ողջ հայ ժողովրդի և պետության մշակութային քաղաքականության գերխնդիրն է:

Ուզում եմ խոսքս ավարտել գրադարանի բարեկամ պատմագետ Զավեն Մսըրըլյանի՝,,Հայկական Հարցի հոլովույթը 1939-2010թթ.. գրքի

առաջաբանում զետեղված հետևյալ մտքով.,,Մեր փափագն է, որ հատկապես նորահաս սերունդը կարդա ամփոփ կերպով տրված տեղեկությունները և հաղորդ դառնա մեր տված մեկնաբանություններին և վերլուծումին..: